


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ չմը 8 ՄԶԸ.
Փոստատու 10 ՄԶԸ.
Վեցամսեյ Կ. Պոլսոյ 4 ՄԶԸ.
Փոստատու 3 ՄԶԸ.
Գումար 2 զուրույ տակնի անդամներու
համար գատ սակարկութիւն կըլ-
այ :



ԼՐԱՔԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՄԱՅԻՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շուկայով կոմնս, որուն ուղեորու-
թեան խաղաղական կերպարան կըն-
ծայուէր, Պէրլին հասեր և անկէջ 'ի
բեղբայրուր մեկնէր է : Բայց մինչև
որ այս երևելի դիւանագիտին պաշ-
տօնին վախճանը հասկցուի, կրնանք
առանց սխալման ըսել թէ քաղաքա-
կան հորիզոնը միշտ ամպամած է :
Բեղբայրուր մէջ նախարարաց մեծ
խորհուրդ մ'եղած էր Ալեքսանդր
կայսեր նախագահութեան ներքեւ,
ուր նկատողութեան առնուէր է քա-
նի մը ժամանակէ 'ի վեր տեղի ունե-
ցած բանակցութեանց պարզիւն
մնայն և մինչև ցարդ ժամանակ կո-
րուսանելով Ռուսիոյ օգուտ մը չը-
տայն : Անգղիա ամեն օր իւր գիրքը
կամրացնէ, և ծովային ու ցամաքա-
յին զորութիւնները կը պատրաստէ :
Թուրքերն ալ իրենց զորութիւնը կը
վերակազմեն և արդէն նոր բանակ
մը պատրաստած են, մինչդեռ Ռու-
սիոյ գիրքը կը տկարանայ, և իրեն
հետ միացող դաշնակիցներ չգտնէր :
Ամիս մ'առաջ Կ. Պոլսոյ մէջ Ռուսաց
ազդեցութիւնն յաղթական էր, բայց
այժմ թէև նախարարական փոփոխու-
թիւն մ'եղաւ, Բ. Դուռը դիմագրու-
թեան սկսած է : Ահա այս խորհրդա-
ծութեանց պատճառաւ Ռուսիոյ վե-
րոյշեալ նախարարական խորհուրդն
որոշէր է ներկայ անստոյգ վիճակին
վախճան տալ, և առանց յարաբե-
րութեանց խղովմը փութացնելու, ու-
րոշ վիճակի մը հասնել : Հետեւաբար
բանակցութեանց նոր ոյժ մը տալ ար-
ժան դատուէր է : Բեղբայրուրի ար-
քունքը Դրան դէմ կը դայրանայ ե-
ղեր, իբրեւ թէ ասիկա անհամաձայ-
նութեան ընթացք մը կը բռնէ : Նախ
Պաթմուի, Շուսուի և Վառնայի խըն-
դերը կար, որ Ռուսիոյ պահանջմանց
հակառակ տակաւին յառաջդիմած
չէր 'ի սկզբան պատճառ ցոյց կը տըր-
ուէր թէ յիշեալ ամրոցներուն մէջ
գտնուած զինուոց և ռազմավթերաց
ցուցակը դեռ պատրաստուած չէ :
Ասկայն յետոյ Դուռն Այսթեֆանոսի
դաշնագրութեան յենլով կըսէր թէ
ինք պարտաւոր չէ բերդերն յանձ-
նելու՝ քանի որ Օսմանեան գերիներն
եռ տըրուած չեն : Այսթեֆանոսի
դաշնագրութեան ժամանակ Ռուս
պատուիրակները մուգած կերելին
բերդերը պարզելու համար պայմա-
նաժամ որոշել, ուստի Բ. Դուռն ի-
րաւամբ կառարկէ թէ մինչդեռ ինք
դաշնագրութիւնը գործադրած է,
Ռուսը տակաւին Օսմանեան հողը դը-
րաւած են, ոչ միայն դաշնագրու-
թեան՝ այլ և զինագրագրի պայմա-
նագրութեան որոշած սահմանէն

դուրս դուրս պահելով : Ռուսը իրա-
ւունք չունին Այսթեֆանոս կամ Նոյն
խի ջախջախ մնալու, զոր կը զինեն
ու կամրացնեն : Կէլիպոլուի կողմն ալ
Ռուսը Շարքէօյի և Ուրշայի միջև
գտնուելու էին, մինչդեռ Պոլսոյըրի
գիծերուն մօտեցած են :

Թօթլէպէն զօրավարը Կ. Պոլս
հասնելէն անմիջապէս ետքը՝ Բ. Դը-
րան նախարարաց հետ տեսակցելով
առաջարկած էր Ռուսաց բանակը
ջախջախ տանիլ եթէ Շուսուի և
Պաթմուի յանձնուին : Այսպէս Ռու-
սաց բանակին և Անգղիական նաւա-
տորմին մի և նոյն ժամանակ յետս նա-
հանջման համար չեղող գիծ մը պի-
տի որոշուէր :

Կարելի է մէկ երկու ամիս առաջ
այսպիսի առաջարկութիւն մը յաշո-
ղէր, սակայն հիմայ Կ. Պոլսոյ մէջ
Օսմանեան զօրաց թիւը Ռուսերէն
վար չմնար : Այն ատեն Ռուսը կրնա-
յին դիւրութեամբ քաղաքը մտնել,
բայց հիմա յանկարծ մտնել դրեթէ
անկարելի է, որովհետեւ ամրութիւն-
ներ չինուած են : Ռուսերը պարզա-
պէս Կ. Պոլսոյ շրջակայներէն հեռա-
ցնելու համար Պաթմուի, Շուսուի
և Վառնայի նման երեք կարևոր բեր-
դեր տալ յարմար չէր կրնար դատ-
ուիլ, մանաւանդ որ թէ և Ռուսը
ջախջախ քաջուին, հոն Կ. Պոլսոյ
դէմ ամրութիւններ կը շինեն, մինչ-
դեռ Օսմանցիք չեղող գիծէն արդիւ-
րութիւն չեն կրնար առաջ երթալ և
ամրութիւն չինել : Այս նկատմամբ
Ռուսաց ջախջախ քաջուին Օսման-
եան բերդորէից պարպուելուն փո-
խարինութիւն չէր կրնար համարուիլ :
Վառնայի Շուսուի և Պաթմուի հը-
րամանատարները՝ Գայսէրի Ահմետ,
Յալլը և Տէրփիլի վաշանքը՝ Ռուսաց
առաջարկութեանց կը պատասխանէին
թէ Բ. Դուռն հրաման ստացած չեն,
և ինդիւն առկա կը մնար : Բ. Դու-
ռը շաքաթ օրն երկու յատուկ պաշ-
տօնատար զրկեց Պաթմուի, բայց ա-
ստնց պաշտօնը դեռ չգիտցուի :

Մինչդեռ Բ. Դրան և Ռուսաց
մէջ բերդաքաղաքաց խնդիրն առ-
կալ կը մնայ, Անգղիա պատրաստու-
թիւն կը տեսնէ, և իւր նախարարը
կէս պատերազմական, կէս սպառնա-
կան և կէս խաղաղասիրական յայտա-
րարութիւններով լի ճառեր կը խօ-
սին : Ազատական դասէն Պ. Պոլսոյ
Մանչեսթըրի մէջ ատենախօսութիւն
մ'ըլաւ, որով Լորտ Պիքսֆորտի աշ-
խարհավարութիւնը կը պարտաւէր :
Առաջին նախարարն հաւաստած էր
թէ թաղուհւոյն նախարարներէն ա-
ւելի խաղաղութեան ջերմ կուսակից-
ներ չկային : Այսու ամենայնիւ նա-
խարարաց ամեն քայլը դէպ 'ի պա-
տերազմ կառաջնորդէ : Ուստի իրենց
այս ընթացքին համար բնականապէս

պատասխանատու են Պ. Պոլսոյ՝ Հընդ-
կատանի նախարար Պ. Հարաի ա-
տենախօսութիւնը, զոր նախորդ թը-
ւով յիշած էինք, յանդուգն և հա-
կատրամաբանական կոչեց : Լորտ Տէր-
պի և Լորտ Գարնարթօն պատերազմի
կուսակից նախարարութեան մը մէջ
չգտնուելու համար հրաժարական տը-
ւին : Լորտ Տէրպի քսան և հինգ տա-
րիէ 'ի վեր պահպանողական մասին
և Լորտ Պիքսֆորտի ընկերակից ե-
ղած էր, և եթէ այս պարագային
մէջ իւր հին ընկերները կը թողուր,
պատճառն այն է որ անոնք մեծ ու-
ճիր մը կը խորհէին Անգղիոյ իրական
շահուց դէմ : Երբ նախարար մ'իւր
ընկերաց վրայ փտահուծիւն չունե-
նալով ոտքին փոշին կը թօթափէ և
կը հեռանայ անոնցմէ, ինչպէս կա-
րելի է որ երկիրն անոնց վրայ վըս-
տահ լինի : Պ. Պոլսոյ վեց միլիոն ոս-
կիի պատերազմական ծախուց վաւե-
րացմանէն անմիջապէս յետոյ նախա-
րարաց ըրած պատրաստութեանց վը-
րայ խօսեցաւ : Երկու ամուսն մէջ
վեց միլիոնին երեք ու կէս միլիոնը
ծախը կ'ըլած է արդէն, թէ և նախա-
րարը յիշեալ դուժարը խորհուրդա-
նէն խնդրած ժամանակ ըսած էին
թէ այն դուժարէն խիստ քիչ կամ
բնաւ չպիտի դործածուի : Պ. Պոլսոյ
նաւատորմին Մարմարա զրկուին և
պահեստի զօրաց 'ի զէն դուժարիւր
պարտաւէր : Բայց ամենէն աւելի խըս-
տիւ խօսեցաւ Հընդկատանի Մահ-
մետական զօրք բերուելուն դէմ : Բը-
րիստոնեայ ազդի մը՝ Ռուսաց դէմ
պատերազմելու համար : Պ. Պոլսոյ
ամբաստանեց նաև նախարարութիւ-
նին, իւր թէ բողոքովին հակասահմա-
նադրական և բռնադատական ընթաց-
քի մը կը հետեւի : Ռուսիա և միւս
պետութիւնը անհրաժեշտ խորհուրդ
կազմելու որոշում տուած էին, Անգ-
ղիոյ նախարարութիւնը միայն ընդ-
դիմացաւ, ուստի և պատասխանա-
տու է տէրութեանց խորհրդին եռ
մնալուն համար : Պ. Պոլսոյ յարեց թէ
Լորտ Մալիզպըրի ծանուցադրին նը-
պատակն էր առաջուան պէս Օսման-
եան կայսրութեան ամբողջութիւնն
ու անկախութիւնը պահպանել, և
Պուլլաբիոյ շարուն յիշելով ըսաւ թէ
արդեօք թուրքերն վերականգնելու
համար պատերազմի պիտի երթայ,
որոյ հողին վրայ ամեն օր շարդ կը
պատահի : Եթէ, ըսաւ, Անգղիոյ ա-
րանց և կանանց հարցուի թէ արդ-
եօք կը հաճին բռնութիւն և ոճիր
պաշտպանելու համար պատերազմի,
Անգղիոյ ժողովուրդն անմիջապէս կը
հրաժարեցնէ այնպիսի նախարարու-
թիւն մ'որ բացորոշաբար այս առա-
ջարկութիւնն ընէ իրեն : Բայց Լորտ
Մալիզպըրի «ամբարշտ» ծանուցա-
դիրն արդէն այս դատը կը պաշտ-
պանէր : Պէտք է արդեօք որ Անգ-

ղիա, ինչպէս ըրաւ քսանհնչորս տա-
րի յառաջ, քառասուն հազար հոգի
կորուսանէ, և հարիւր միլիոն ոսկի
զոհէ թուրքերն պաշտպանելու և
Պուլլաբ ժողովուրդեան ազատութիւնը
չափաւորելու համար : Անգղիական
զօրաց քաջութեան վրայ խօսելով՝ Պ.
Պոլսոյ ըսաւ թէ քաջութիւնը հազ-
ւագիւտ բան մը չէ : Ռուսերը, թուր-
քերն և նոյն իսկ Ալբերիկէի Գաֆիր-
ներն ալ քաջութիւն ունին : Այս այն-
պիսի վաճառք մ'է ըսաւ, զոր աշ-
խարհիս ամեն կողմի կարելի է գըտ-
նել օրը տասն և ութ քէշ վարձքով
(մէկ ու կէս շիլինկ) : Պ. Պոլսոյ ջէր-
քէզներն ու Գիւրտերն ալ կրնար յի-
շել իբրեւ օրինակ այսպիսի քաջու-
թեան : Բայց հիմա Գրքմի պատերազ-
մէն ցաւալի յիշատակներէ զատ բան
մը չէ մնացած :

Պ. Պոլսոյ՝ Ժողովուրդական այս
հռչակաւոր տրիբունին՝ սոյն ազդե-
ատենախօսութեան երկու նախարարը
պատասխանեցին : Ներքին գործոց
նախարար Պ. Բրոս՝ Բրէսթօնի մէջ
խօսելով՝ պաշտպանեց 1856ի և 1871ի
դաշնագրութիւններն, և ըսաւ թէ
Անգղիա դաշնագրութեանց հաւատ-
քը պահելու հըգէ, որ եթէ միանգամ
վերնայ, ոչ ևս հարկ կը մնայ դաշ-
նագրութիւն կնքելու, քանի որ ստո-
րագրողաց մին կրնար զայն ըստ հա-
ճոյս պատուել : Այս պատճառաւ Անգ-
ղիա կը պահանջէ որ Այսթեֆանոսի
դաշնագրութիւնն ամբողջ ներկայա-
նայ 1856ի և 1871ի դաշնագրութիւն-
ներն ստորագրող տէրութեանց, մինչ-
դեռ Ռուսիա կընդդիմանայ ասոր : Պ.
Բրոս՝ Լորտ Մալիզպըրին և անոր չըր-
ջաբերական ծանուցադրին ալ պաշտ-
պանեց : Լորտ Մալիզպըրի Կ. Պոլս
եկած ժամանակ թուրքի մէջ բա-
րենորդութեան ընել և ըսաւ հաւա-
վարութիւն հաստատելու առաջարկած
էր, որպէս զի Ժողովուրդը դո՛հ ըլ-
լայ, հաւատարմի՛մ և հնազանդ մնայ :
«Դժբաղդաբար, ըսաւ Պ. Բրոսի ևս,
թուրքիոյ կառավարութեան ընդդի-
մութեամբ Կ. Պոլսոյ դեպքանախոր-
հուրդն 'ի գերեւ ելած էր : Լորտ Մա-
լիզպըրի ծանուցադրելը կըսէ նաև
թէ Կ. Պոլսոյ դեպքանախորհրդին մէջ
հաստատուած ծրագիրը Դրան յամա-
ռութեան պատճառաւ չկրնար հիմա
գործադրուի : «Պէտք է խստովանինք
յարեց նախարարը, թէ մեծ փոփո-
խութիւններ եղան, թէ պարագայե-
րը նիւթապէս յեղաշրջեցան, և նոյն
վախճանը ձեռք բերելու համար հի-
մա ուրիշ միջոցներ գործածել պէտք
կը լինի : Անշուշտ 1856ի և 1871ի դաշ-
նագրութեանց մէջ փոփոխութիւն
ներ պիտի ըլլան : Պատրաստ ենք ըն-
դունելու որ տեղի ունեցած պատե-
րազմը լուրջ ուշադրութեան արժանի
է և թէ Ռուսիա պէտք է իւր շահն
ստանայ պատերազմէն, բայց դաշ-

Հանգուցեալ Գարամաճեան Յա-
րութիւն էֆէնտի յաղարկաբու-
թեան հանգէսն, ինչպէս որ ծանուց-
ուած էր, կիրակի օրը մեծ շքեղու-
թեամբ կատարեցաւ Գարաբաղի Ս.
Թագաւոր եկեղեցին ի ներկայու-
թեան Ս. Պատրիարք հօր, որ գե-
ղեցիկ գումարանական մը խօսեցաւ՝
յիշելով հանգուցեալն քրիստոնէա-
կան ազգասիրական և բնկերական
առաքինութիւններն ու բարերարու-
թիւններն, որոց Ն. Սրբազնութիւնն
այ ի մօտոյ ծանօթութիւն ունեցած է՝
մասնաւորապէս հանգուցեալին վախ-
ճանէն քանի մ'օր առաջ ըրած կատ-
կին ալ ներկայ գտնուելով:

Հոգեհանգստեան արարողութիւ-
նը կատարուելէ ետեւ, հանգուցեալին
մարմինն յատուկ շոգեհաւով Ղարա-
թիա բերուելով, ըստ բաղձանաց հան-
գուցեալին՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ
բակը թաղուեցաւ:

Սոյն յաղարկաւ օրութեան ներ-
կայ գտնուեցան ազգիս բոլոր երեւ-
ելիներէն զոտ՝ նաեւ բաղձաթիւ
օտարազգի վաճառականք և սեղա-
նաւորք, որոց առջև ալ հանգուցեալը
մեծ յարգ և համարում տուցած էր
իւր անապիւտ ուղղութեամբն և
ազնիւ բնաւորութեամբ:

Լսածնուս նայելով հանգուցեալ
Յարութիւն էֆէնտի ընտանիքն 500
ոսկի նպաստ նուիրելու է Ղարաթիոյ
կեդրոնական վարժարանին շինու-
թեան ծախսոց:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Մ'ԱՌ ԱԶԳԱՅԻՆ
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԺՈՂՈՎՈՒԴԻՆ ՀՐԱՆ
ՀԱՆԳԵԼՈՒ ԴԻՒԹԻՒՆ ՄԵՋՈՑ ՄԸ

(Ծառ. Կէս - 2119)

Ա.

Յայտնի ճշմարտութիւն մ'է թէ
ուր քսան տուն Հայ կայ, անդ ևս
քահանայ մը կայ ու պէտքը կ'ըզգո-
ւի: Քահանայ մը գորով, ազօթա-
տեղի մը՝ եկեղեցի մ'անհրաժեշտ
պիտի լինի. և ըստ մեր վաղեմի ու-
վորութեանց՝ եկեղեցւոյն քովն ալ
գարունն է:

Բայց ընդ հանրապէս դիտէք ինչ
կը պատահի Հայաստանի դիպրերուն
մէջ. ժողովուրդը կանուխ եկեղե-
ցիէն երեսէն յետոյ՝ դաշտերը կեր-
թան աշխատելու. շատ անգամ ևս
քահանայն ալ օրապահակը ճարելու
համար կ'ատկապի նոյնպէս ընել. ո-
րով միշտ խեղճ քահանայն՝ ժողո-
վրդեան դէմը ստորուկի պէս կը կե-
նայ, զի անկէ է իւր ապրուստն:
— Գիտեմ, կան մեր մէջ գաս մը մար-
դիկ որ ուրախ են եկեղեցականաց
այս ոտորին վիճակիս մէջ գտնուե-
լուն, և թէ եկեղեցականաց ձեռք
ազգին մանկուսի կրթութիւն՝ զպա-
գայ սերունդն կ'աշխարհաբան կամ
ապշուրթեան դատապարտել կը հա-
մարին. սակայն կը փափաքիմ գիտ-
նալ թէ արդեօք՝ եթէ կրօնական
կրթութիւնն Հայաստանէն բաւեա-
լաւ ըլլամք՝ անչին ինչ գնելու եմք,
և կամ թէ մեր ժողովուրդն ընդու-
նալ է մեր հոգեկեցեցան մարդասի-
րաց քարոզած կրթական գրութեա-
նին: Աւելի լաւ է որ այս կանխահա-
գադափարներու տէր անձինք՝ փո-
խանակ յամառուելու՝ իրեանց ճիգը
միացնեն՝ ազգիս ներկայ վիճակիս
աւելի գործնական երևոյ գրութեան
մը, վերջէն—եթէ ժամն հասած է—
իրենց բուն յատուկ գաղափարներն
ի գործ գնելու պայմանաւ:

Արդ երբ գիւղին բնակիչները
գաշտ կերթան աշխատելու և քա-
հանան ալ չպարապիր մանկուսին կար-
գալ գրել սովորեցնելով, ինչ կըլլան
աղայք. իւրեանց հարց պէս կը դա-

տապարտուին բանուր լինելու, և
աղըք միշտ սպիտակութեան և խեղ-
ճութեան մէջ կը մնայ և օր մը Հայ
անունն իսկ աշխարհիս վերայէն կը
կորուսի:

Ուրեմն ասոր դարման — ստի-
պեմք քահանայն իւր պարտքը կա-
տարել. այսինքն առաւօտեան ժա-
մասացութեանն վերջն՝ իւր գիտցա-
ծը մանկուսին սովորեցնելով: Բայց ինչ
է գիտցածը. — ոչինչ, ա, բ, գ. —
հոգ չէ, մեղի ալ այսօր այն պէտք
է. վաղը ա, բ, գ, էն աւելի դիտցո-
ղը կուգայ, և այլն: Եթէ գիւղի մը
քահանայն հազիւ թէ Սարգսի ըն-
թեանու գիտէ, ըսել է թէ նոյն գեղ-
ջուկ ժողովուրդն այսօր միայն այն-
չափ գիտնալու կարօտ է. զի ամե-
նուս յայտնի է թէ քահանայից ձեռ-
նադրութիւնը ժողովուրդեան ընտրու-
թեանն կ'ախուսէ՝ ըստ Հայաստան-
եայց եկեղեցւոյ գրութեան:

Այս գրութեամբ քահանային վի-
ճակը կաղնուածայ, սրովհետեւ ժո-
ղովուրդն առ նա իւր առ ստրուկ
մը չնայիր, այլ այնուհետեւ գնա կը
նկատէ իւր գաղափարի իւր դաւա-
կաց և ըստ այնմ կը պատուէ և կը
վարձատրէ: Մանկուսին առ նուազն
գրել կարգաւ կը սորվի, և եթէ կայ
մէջերին մի քանիներ որ աւելի բան
մ'ըլլաւ ընդունակ են, անոնց ալ
գիւրթութիւններ մտածուած են: Եր-
բուր աղայն իւր ընտանեկան յարկէն
բաժնուելու տարիքին, այսինքն 13
— 14 տարեան հասնի, այն ժամա-
նակ կ'աւանդուի գնա ու կը տանիմք
քաղաքին մօտ գտնուած վանքն: —
Ինչ է վանքը:

Բ.

Հայաստանի ամեն գիւղաքաղաք
և քաղաք մի կամ աւելի վանք ունի,
որչափ որ շրջակայ գիւղօրէք կրնան
պահել:

Քաղաքէն ժամ կամ ժամուկէս
հեռի, հոգաւոր քարաշէն ձմեռա-
նոցի նման շէնք մը կը կանգնի. ներս
կը մտնեն ու կը տեսնա՞նք իրիկ մա-
տուռ մ'ու ընդարձակ սրահներ:
Եթէ մեր նախնիքն այս վանքերն
իւր հասարակաց ազօթատեղի են
չինքն, ինչօք քաղաքէն հեռու շի-
նէին կամ թէ մէջի մտաւունքն ին-
չօք այնչափ փոքր լինէին: Մեր կրօ-
նից մէջ կայ այնպիսի սովորութիւն,
որ տարին մի քանի անգամ՝ հաւա-
տացեալք ի մի ժողովին մեծ ընդար-
ձակ սրահներու մէջ և հին կապալա-
տութեան հանգիստներ կատարեն. —
ոչ, ճարին մի անգամ վանքի քան-
դէլին համար միթէ այս տեղերն կեր-
տած են մեր նախնիք. ոչ, ոչ. ա-
մենայն կերպիւ կը հաստատուի թէ
գարունի նպատակաւ հիմնուել են:
Քաղաքէն հեռու գտնուելին ևս
բաւական փոքոր է՝ վանոց չափա-
հասներու գարոց լինելուն. զի ա-
մեն թիւս անձեական փորձով գիտեմք
թէ աղայ մ'երբ յարբուսն մտնէ,
այլ ևս անկարելի է իրեն՝ քաղաքի և
ընտանեաց մէջ կենալով՝ ուսմամբ
պարապիլ մտաց ու սրտի հանգու-
տութեամբ, որովհետեւ աշխարհային
մտածութիւններ երկատարութիւն մա-
տաց մտացը մէջ արդէն մտաւ գը-
տած ու զայն ցնդած են: Անոր հա-
մար վանոց թմբն համարելով քսան
կամ երեսուն գիւղերէն ամենէն յա-
ռաջագէտներն այսինքն յիսուս կամ
վաթսուս աղայ կը ժողովեն ու վան-
քը կը գնին: Հոն աղայք բաւական
տարիներ կուսանին ինչ որ վանա-
կանը կարող են ուսուցանել, և իւր-
եանց կոչման համաձայն կընտրեն
արուեստ մը կամ այլ ինչ:

Ասկէց զատ՝ այն վանքերն ունին
նաեւ աղարկներ, ուր բազում մշակք

կը բանին. ասով գարոցականքն նաեւ
գիւրթութիւն ունին երկրագործու-
թեան իսկ վարժելու և հմտանալու.
այս ալ միթէ քիչ բան է: Հայ գիւ-
ղացւոյն, որ երկրագործութեան ար-
ւեստին անտեղեակ՝ շատ երկրի բերք
կը կորսնցնէ:

Հիմայ ինչի՞ կը ծառայեն Հայաս-
տան: Հարկարարութեան միայն
ներքն աւազարկներն, — առ ոչինչ. կու-
տեն կը խմեն և չգիտեմ ալ ինչ կը-
կրնեն: Ինչօք համար ազգին այս
խեղճ վիճակին մէջ, իւր ստակով եր-
բմն կերպուած ու այնքան եկա-
մաւ ունեցող հաստատութիւնք ի-
րենց նպատակին չծառայեն ու ծու-
լարաններ դառնան, մինչդեռ քիչ
մը կամօք մեծ արգասիք կրնայ ազ-
գին անտի սպասել:

Քիչ մը հաստատուն կամք ազ-
գային վարչութեան կողմէն, և առ-
աւանդաբար ու վանահայր յղեալ
շրջաբերական մը բաւ է, և ամենայն
կարգի կը մտնէ մի քանի տարուան
մէջ: Երբէք անագան չէ բարի գոր-
ծոյ մը ձեռնարկելու համար. ուրեմն
վարչութիւնը թող ի նկատի առնու-
նաւատաւ առաջարկութիւնն ու անոր
գործադրութիւնն հրամայէ առ որ
անկէ, ապահով եմք թէ մեր եկե-
ղեցական դասն իսկ իւր պարտքը կը
կատարէ. զի մինչև ցարդ Հայաս-
տանեայց ազգային եկեղեցւոյն երբէք
իւր շահն ազգին շահէն զատած չէ,
որովհետեւ մեր եկեղեցական դասն
է սկիւղակից մերոց, այսինքն մեր
հայրերն, մեր պառքերն ու որդիքն.
և թէ ինչ որ մի քանի վայելիմք ի-
րենն է, և թէ ինչ որ նա կը վայելէ՝
մեր ամենուն է:

Սակայն ոմանք պիտի աւարկեն
մեզ թէ ինչպէս պիտի կերակրին վան-
քը փակուող ուսանողք. մեր եկեղե-
ցին անոր ևս միջոցը գտած է:

ճարին մի անգամ-որոշեալ ժամա-
նակ մը — ամեն վանքէն նուիրակ մը
կուգայ թեմի գիւղերն: Ընթերցող-
ներէն եթէ ոմանք Հայաստանցի են,
կարող են հասկնալ թէ ինչ նպատա-
կաւ: Գիւղի քահանայն զհաւատաց-
եալս եկեղեցւոյն կը ժողովէ և զամե-
նային կը յորդորէ որ վանքէն նուի-
րակ եկաւ և իւր արձանշակներ իրեն
յատկացեալ պաշտօն տայ: Պաշտօն է Հա-
յաստանի մէջ ամեն մէկ տան բեր-
քերուն և ընչից տարեկան տասա-
նորքն: «Տալ դատաստորդս ընչից»
Այս պաշտօն ժողովուրդը սիրով կու-
տայ վանոց, զի գիտէ թէ հոն տե-
ղի վանականք անով պիտի ապրին:
Կենաց այլ և այլ ուրախ և տխուր ժա-
մանակներէն իսկ վանքն իւր բաժինն
նի, զորօրինակ՝ պատկազութեան,
մկրտութեան, նշնադրութեան և այլն:

Եթէ Հայաստանեայց անանն ու
համադրին թէ վանքին տրուած
պաշտօն պարապի չերթար և թէ նովա-
մանկտին կը կերակրի, կը կրթուի
ու մարդ կըլլայ, այն ժամանակ փո-
խանակ տարին մի անգամ տարւել եր-
կու անգամ կուտայ և աւելի յօժար
կամօք: Մէյ մ'սկիւրն է քիչ մը գըթ-
ուարն. եթէ մի քանի խոհուն և յա-
րատուող ազգասէրք այս գործին
ձեռք զարնեն և ի գլուխ հասնի ա-
ռաջագրեն, ասկէց դիւրին բան չկայ,
և այս նազգօգուտ գործոյն պատկ-
ուիլն իրենց բաւական տրիտուր կը
համարուի:

Յ. Թ. Ժ.

Միացեալ յաջորդ Խոսով

ԹՂԹՈՎՅՈՒԹԻՒՆԻ ՄՈՍԿՈՎ ԼՐԱԿՐՈՑ

Եղեւիս 10 ապրիլ 1878

... Տէր.

Գործադրար շատ անգամ կը տես-
նուին այնպիսի նամակագիրք, որոց յօդ-
ւածներուն ստեղծը հրապարակու հա-

մար հարկ կըլլայ անոնց հերքումը նամա-
կագրել, և այն առթիւ գրադեցնել մա-
մուլը: Քաղաքէս գրուած և Նոր Դարու
2253րդ թուոյն մէջ Յ. Արեւեան ստորագ-
րութեամբ հրատարակուած նամակը այն
կարգէն ըլլալով, ներեցէք մեզ որ ճշ-
մարտութիւնը յերեան ածելու համար
Ձեր պատուական լրագրոյ մի անկիւնը
գրաւելու շնորհն ունենանք:

Պ. Յ. Արեւեան իւր յիշեալ նամակին
մէջ կըսէ. «Երախտութեամբ սրտի կը ծա-
նուցանեմ որ մօտ օրերս Վարդանանց ըն-
կերութիւն մ'ալ հիմնեցաւ Արեւեան գրա-
րոցի մէջ»:

Նախ ստոր վրայ կը գարմանանք, վան-
դի Պ. Արեւեան ինքն է որ իւր ստորագ-
րութեամբ հրատարակեալ նամակին մէջ՝
ազգային դպրոցի մը վրայ իր մասնաւոր
մակնուէր թելելու և անոր համար կը գրու-
մէ և առանց չիկնելու երեան կը հանէ,
մինչդեռ ինքը ազգին քանի մը փորային
կարօտ սոսկ պաշտօնեայ մը՝ դաստառ
մ'է՛ այն դպրոցին մէջ, որ եկեղեցւոյ
գաւիթը հասարակութեան դրամով չի-
ւած ըլլալով, Թագ. Խորհրդոյ իրաւա-
տութեան տակ կ'ընայ «Ազգային դպրոց»
պնուակը:

Յաւ է ըսել թէ Ազգ. ժողովները բը-
նաւ ուղարկութիւն չեն ընծայեր պայի-
սի կէտերու, և ասանկ տարի կուտան
փաստէր բազմաթիւներու՝ ազգին
սեփական իրաւունքն իրենց անձին
պատիւ օրաւ, մինչդեռ միւս կողմէն ժո-
ղովուրդը իրաւամբ կըզբոյս արդար նա-
խանձարկութեամբ, և չճանչնար երբէք
«Արեւեան» անուամբ ինքնակոչ դպրոց
մը: Սոյն կէտը դարձեալ Ազգ. ժողովոց
ուղարկութեանը յանձնելով՝ դանք ուրիշ
մասի:

Պ. Նամակագիրը դպրոցին մէջ Վար-
դանանց ընկերութիւն մը հիմնուած է
ըսելով՝ անոր նպատակն լաւ ծրագրեր
էր, որ է «Ընթերցասէր որը և աղքա-
տիկ տղայոց հոգատարութիւն ընել, ա-
նոնց կարգաւու գրելու թուղթ, գրիչ և
հանդերձը հոգալ»:
Ընտիր նպատակ. սոսկայն ստոյգ է այս. կայ այնպիսի ըն-
կերութիւն մը. ինչի մէջ ըլլար: Թո՛ղ
ներուի մեզ ըսել ի սէր ճշմարտութեան
թէ այդ ընկերութեան ալ դպրութիւնը
Պ. Արեւեանի եղբրուազնեւուն կար-
գէն է, զոր ինքզինքը հեռաւորաց քով
ազգասէր կեղծելու համար՝ կը գիծակի
հրատարակել: Մենք զո՞ք պիտի ըլլանք՝
եթէ դպրոցին մէջ Վարդանանց ընկե-
րութեան գոյութիւնը կարեւոր հաստա-
տել, ինչպէս ինքը գրած էր. և որոյ
կանոնադրին ու խորհրդականաց անուան-
քը հրատարակել խոստացած էր:

Բնական է որ Պ. Արեւեանի այն ան-
գոյ ձեռակերպութիւնը հեռաւոր ազգայ-
նոց դարձանք և կրնանք ըսել ցատում
պատճառէ. սակայն իրենց պարմանքը
շատ չէր ըլլար՝ եթէ անոր անցելոյն ծա-
նօթութիւն ունենային...

Արեւիկ և կաւ որ յայտնենք:

Պ. Արեւեան, այս անգոր լուր հանեց
իրու թէ Թանգարան մը (իւր բառն է)
հաստատուած է, և իւր մի երկուստեք նը-
ուերակը անցեալ տարւոյ մէջ Պարսի
և Նրուստիւմէն քանի մը կտոր գիրք յա-
ջողեցաւ ձեռք ձգել: Արդ, ինչի՞ կը ծա-
նայէ այդ Թանգարանը. ինչ եղան աս-
կից անկից տնտեսած գրքերը, ցարդ քա-
նի՞ ազգայինք տակէ գիրք ստացան կար-
դալու. ո՞րք են այդ թանգարանին հա-
մարատուն ու համարատուն. այս բանն
ըն ուրիշ՝ հարցնելու ենք. — չգիտցուի:

Կարծենք չենք մեղանք ճշմարտան
ըսելով, թէ այդ թանգարանը՝ շահագի-
տական կամ լաւ ևս է ըսել հասարա-
կաց իրաւունքը միմեկու գեղեցիկ ֆաշի-
տ մ'է:

Արեւ-հատենք խօսքերնիս. առ այժմ
բաւական են այս ծանօթութիւնը նու-
ւակելու համար այն տառական ցոյցերը,
որը հեռաւորաց կարծիքը պատրելու հա-
մար նիւթուած են:

... Տէր, իւր պաշտօնական ճշմարտու-
թեան հաճեցէք հանդերձ ձեր արդարաւ
կորով դիտողութեամբ հիւրընկալել գներ-
կայս, ընդունելով մեր խորին յարգանքը:

Որով մնամ...

Կարապետ Յ. Արեւեան

